ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Հոդված 28. Գործունեության լիցենզիա ունեցող անձի պարտականությունները

1. Գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է՝

ա) իր գործունեությունն իրականացնել սույն օրենքին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերին ու գործունեության լիցենզիայում նախատեսված պայմաններին համապատասխան.

բ) ***(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)***

գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)***

դ) ***(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)***

ե) ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար.

զ) ***(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)***

է) լիցենզիայի պայմաններին համապատասխան իրականացնել տեխնիկական (ներառյալ՝ տեխնոլոգիական կորուստների, վառելիքի տեսակարար ծախսի, սեփական կարիքների համար անհրաժեշտ էներգիայի կամ բնական գազի ծախսի և այլն) և (կամ) ֆինանսական աուդիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ.

ը) սահմանված կարգով հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ներդրումային ծրագրերը՝ ապագա սակագներում ներդրումների ամբողջական կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով.

թ) հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, վառելիքի տեսակարար ծախսերի, սեփական կարիքների համար օգտագործվող էներգիայի, բնական գազի և սակագնի տարր կազմող այլ մեծությունների հաշվարկման մեթոդիկաները.

ժ) իրականացնել սույն օրենքով ամրագրված մյուս պարտավորությունները:

1.1. Գործունեության լիցենզիա ունեցող ֆիզիկական անձը կամ իրավաբանական անձի իրական սեփականատերերը, հիմնադիրները (մասնակիցները), գործադիր մարմինը պարտավոր են հայտարարագիր ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Սույն մասում նշված անձանց կողմից հայտարարագրի ներկայացման գործընթացի վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 38-42-րդ հոդվածների պահանջներն այնքանով, որքանով կիրառելի են նշված անձանց կողմից հայտարարագիր ներկայացնելու իրավահարաբերությունների վրա:

2. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը պետք է վարվի լիցենզավորված գործունեությունից առանձին՝ առանձնացված հաշվառմամբ, և չպետք է վտանգի լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

(28-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 07.02.18 ՀՕ-100-Ն)